

Բանալի բառեր՝ ֆինանսներ, շահութաբերություն, պարտավորություն, կապիտալ, ծախսեր, ցուցանիշ:

ՀՏԴ 336.02

## «ԱՐԱՐԱՏ ՍՆՆԴԻ ԿՈՄԲԻՆԱՏ» ՍՊԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՅԻՄՆԱԿՆԵՐԻՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

### ԼԼՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի  
գիտաշխատող տնտեսագիտության թեկնածու

### Արամ ՄԻՍԻԹԱՐՅԱՆ

Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի  
տնտեսագիտության և կառավարման ամբիոնի դոցենտ  
տնտեսագիտության թեկնածու

**Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի տրամադրած  
ֆինանսավորմամբ՝ 16YR-5B051 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:**

Ցանկացած ձեռնարկատիրական գործունեության իրականացման հիմնական նպատակը տնտեսական գործունեությունից շահույթ ստանալն է և դրա բարձր մակարդակ ապահովելը, ինչը հնարավոր է միայն կազմակերպության ռեսուրսների ճիշտ և արդյունավետ կառավարման միջոցով: Տնտեսական գործունեության ընթացքում առաջ են գալիս մի շարք խնդիրներ, որոնք պահանջում են համապատասխան լուծումներ: Այս առումով կարևոր է կազմակերպության հաշվապահական հաշվառումը արդյունավետ կազմակերպելը և ֆինանսական ռեսուրսների արդյունավետ կառավարում, որը հնարավոր է միայն բանիմաց և փորձառու հաշվապահների և ֆինանսիստների միջոցով, ինչը սակայն ներկայումս մի շարք կազմակերպությունների կողմից իրականանում է ոչ արդյունավետ: Կազմակերպությունների ֆինանսական վերլուծությունների վերաբերյալ կարելի է առանձնացնել ՀՀ տնտեսագետներ Ա. Բայադյանի, Կ. Առաքելյան, Լ. Բաղդասարյանի, Վ. Վարդանյանի, Ս. Ղազարյանի աշխատությունները: Այնուհետև մանրամասն ներկայացված են կազմակերպություններում ֆինանսական ցուցանիշների վերլուծության մեթոդաբանությունը, անհրաժեշտ ցուցանիշները և բանաձևերը, որոնց միջոցով հնարավոր է իրականացնել կազմակերպության ֆինանսական վիճակի վերլուծություն, բացահայտել առկա խնդիրները և տալ համապատասխան գնահատական կազմակերպության ֆինանսական վիճակի և դրա բարելավման վերաբերյալ [1-8]:

Տնտեսական գործունեության իրականացման ընթացքում տնտեսավարող սուբյեկտների մոտ անհրաժեշտություն է առաջանում թարմացնել և վերագինել արտադրության հիմնական միջոցները, ինչպես նաև ընթացիկ գործունեության ընթացքում ձեռք բերել շրջանառու միջոցներ, որոնք պահանջում են ֆինանսական ռեսուրսներ: Այս առումով առաջանում են խնդիրներ, բանի որ շատ դեպքերում տնտեսավարողները ի վիճակի չեն լինում կատարել ներդրումներ, կամ իրականացնել վճարումներ ուստի ֆինանսական ռեսուրսներ ներգրավելու նպատակով դիմում են առևտրային բանկերին, վարկային կազմակերպություններին և այլ կառույցներին: Ֆինանսական հաստատությունների կողմից վարկավորումը ներկայումս շատ թանկ է՝ կապված ֆինանսավորման տոկոսադրույթի հետ և սա հանգեցնում է տնտեսավարող սուբյեկտների շահույթի կրճատմանը: Ֆինանսական ռեսուրսների թանկ լինելու պատճառով տնտեսավարողների մոտ առաջ են գալիս խնդիրներ երկարաժամկետ վարկային պարտավորությունների պատշաճ կատարման առումով և խոշոր վարկերով ծանրաբեռնվածության արդյունքում տնտեսական գործունեության ընթացքում շահութաբերության մակարդակը կրճատվում է, ինչն էլ հետագայում հանգեցնում է ֆինանսական խնդիրների վատթարացմանը:

Շուկայական հարաբերությունների պայմաններում Հայաստանի Հանրապետությունում սեփական միջոցներով բավականին բարդ է ծավալել տնտեսական գործունեություն, բանի որ ռեսուրսները սուղ են, սակայն վերջին տարիներին հիմնականում զարգացում է ապրել հատկապես արդյունաբերությունը, մասնավորապես սննդարդյունաբերությունը: Նշված ոլորտը ապահովում է աշխատատեղեր, ինչպես նաև լուծում սոցիալ-տնտեսական խնդիրներ, դրա հետ մեկտեղ ստեղծելով ավելացված արժեք, նպաստում է գյուղի և գյուղատնտեսության զարգացմանը և լուծում պարենային անվտանգության խնդիրը:

Հաշվի առնելով վերոգրյալը նպատակահարմար ենք գտել հայրենական, ինչպես նաև արտասահմանյան հեղինակների կողմից առաջարկվող ֆինանսական ցուցանիշների վերլուծության մեթոդաբանությամբ [1-8] իրականացնել ֆինանսական ցուցանիշների վերլուծություն սննդարդյունաբերության ոլորտում հայտնի վերամշակող կազմակերպություններից «Արարատ սննդի կոմբինատ» ՍՊԸ օրինակով:

Հետազոտության նպատակն է վերլուծության միջոցով բացահայտել առկա խնդիրները և ներկայացնել առաջարկներ ֆինանսական վիճակի բարելավման և շահութաբերության մակարդակի բարձրացման համար:

«Արարատ սննդի կոմբինատ» ՍՊԸ-ն հիմնադրվել է 2010թ.: Ընկերությունը տարիների ընթացքում կատարելով ներդրումներ ընդլայնել և զարգացրել է արտադրական հզորությունները, ավելացրել արտադրատեսականի, ստեղծելով լրացուցիչ աշխատատեղեր: Ընկերությունը զբաղվում է գյուղատնտեսական հումքի վերամշակմամբ, ինչի արդյունքում նպաստում է ինչպես սննդի արդյունաբերության այնպես էլ գյուղատնտեսության արտադրանքի ծավալների ավելացմանը որի արդյունքում ստեղծվում է ավելացված արժեք: Ներկայումս «Արարատ սննդի կոմբինատ» ՍՊԸ կողմից արտադրվում են ՏՊԱ փաթեթավորմամբ, պոլիպրոպիլենի տարաներով և ապակյա շշերով բնական հյութեր, կոմպոտներ, ջեմեր, մուրաբաներ,

բանջարեղենի պահածոներ, խոտաբույսերից թեյեր և այլն: Ընկերությունը զինված է անհրաժեշտ ժամանակակից սարքավորումներով, հոսքագծերով, ինչպես նաև ներդրված է որակի կառավարման ISO 22000:2005 համակարգ, որը ապահովում է թողարկվող արտադրանքի բարձր որակ, ինչի շնորհիվ ընկերությունը ներքին շուկայում իրացման հետ մեկտեղ արտադրանքը արտահանում է արտերկիր[9]:

Ներկայացնենք «Արարատ սննդի կոմբինատ» ՍՊԸ ֆինանսական ցուցանիշների [10] վերլուծության արդյունքները ստորև.

Աղյուսակ 1.

«Արարատ սննդի կոմբինատ» ՍՊԸ շահութաբերության գործակիցները, 2013-2016թթ.

Գործակցի անվանումը	Գործակցի բանաձևը	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.
Չուտ շահույթի գործակից	Չուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո/ Իրացումից հասույթ	-7.32	0.33	7.72	8.1
Համախառն շահութաբերության գործակից	(Իրացումից հասույթ – Իրացումից արտադրանքի ինքնարժեք)/ Իրացումից հասույթ	19.33	25.06	20.46	28.9
Ինքնարժեքի շահութաբերության գործակից	(Իրացումից հասույթ – Իրացումից արտադրանքի ինքնարժեք)/ Արտադրանքի ինքնարժեք	23.97	33.45	25.73	40.6
Ակտիվների շահութաբերություն (ROA)	Չուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո/ Ընդամենը միջին ակտիվներ	-2.22	0.12	2.03	2.5
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)	Չուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո/ Միջին սեփական կապիտալ	-12.08	1.05	12.7	12.0
Չուտ ակտիվների շահութաբերություն(ROA)	Չուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո/ Հիմնական միջոցներ +(ընթացիկ ակտիվներ-ընթացիկ պարտավորություններ)	-5.77	0.24	4.08	4.71

Ըստ կատարած վերլուծության արդյունքների ընկերության շահութաբերության գործակիցներից (Աղյուսակ 1) զուտ շահույթի գործակիցը 2013թ. եղել է -7.32, քանի որ այդ տարվա ֆինանսական արդյունքը վնասով է եղել, իսկ 2016թ. այդ ցուցանիշը բարելավվել է կազմելով՝ 8.1, համախառն շահութաբերության գործակիցը համապատասխանաբար՝ 19.33 և 28.9: Ինքնարժեքի շահութաբերության գործակիցը 2013թ. եղել է 23.9, իսկ 2016թ.՝ 40.6: Շահութաբերության գործակիցը կարելի է գնահատել դրական, քանի որ 1 դրամ հասույթից բոլոր կատարված ծախսերի դիմաց ստացվում է 8.1% կամ 0.08 դրամ շահույթ, իրացված արտադրանքի ինքնարժեքի դիմաց կատարված ծախսերից հետո ստացվում է 28.9% համախառն շահույթ, կամ 0.28 դրամ շահույթ, ինչպես նաև արտադրանքի ինքնարժեքի վրա կատարված ծախսերից հետո ստացվում է 40.6% կամ 0.4 դրամ իրացումից շահույթ, ինչը կարելի է գնահատել բավարար: Ակտիվների շահութաբերությունը (ROA) 2013թ. եղել է -2.22%, քանի որ այդ տարվա ֆինանսական արդյունքը վնասով է եղել, իսկ 2016թ.՝ 2.5, ինչը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր 1 դրամ բաժնեով ակտիվից ստացվում է 2.5% կամ 0.02 դրամ շահույթ, ինչը վկայում է ընկերության ակտիվների անարդյունավետ օգտագործման մասին: Նույնը կարելի է ասել սեփական կապիտալի շահութաբերության (ROE) վերաբերյալ քանի որ ներդրված կապիտալի յուրաքանչյուր դրամի դիմաց ստացվում է 12% կամ 0.12 դրամ շահույթ: Չուտ ակտիվների շահութաբերության ցուցանիշը 2013թ. կազմել է -5.77%, իսկ 2016թ.՝ 4.71% կամ 1 դրամ զուտ ակտիվից ստացվել է 0.04 դրամ շահույթ: Նշենք, որ Ընկերության զուտ շահույթի ցուցանիշը 2014թ. նվազել է 6%-ով, 2015թ. այն աճել է 24.6%-ով, իսկ 2016թ. աճել է շուրջ 20 անգամ: Արտադրանքի իրացումից զուտ հասույթի աճի գործակիցը 2014թ. կազմել է 31.7%, 2015թ.՝ -14%, իսկ 2016թ. այն բարելավվել է կազմելով՝ 19.1%: Ներկայացված ցուցանիշների ցածր լինելը պայմանավորված է ֆինանսական արդյունքի՝ այն է շահույթի փոքր ցուցանիշով և ֆինանսական ծախսերի ավելացմամբ, որի արդյունքում նվազել է նաև Ընկերության ընդհանուր սեփական կապիտալի ծավալը: Հարկ է նշել, որ 2014թ.-ից Ընկերության տևտեսական գործունեությունից տարեկան կտրվածքով ստացվել է համախառն շահույթի բավարար մակարդակ, որը նպաստել է այլ ցուցանիշների բարելավմանը: Ֆինանսական վերլուծության արդյունքում ստացված ցուցանիշների ընդհանուր ցածր մակարդակը պայմանավորված է արտադրանքի բարձր ինքնարժեքով, կապված արտադրության մեջ օգտագործվող էլեկտրաէներգիայի և գազի բարձր արժեքով, ինչպես նաև տրանսպորտային ծախսերով, որոնք ուղղակիորեն ազդում են արտադրանքի վերջնական գնի ձևավորման վրա: Հաշվի առնելով, այն որ արտադրանքի մեծ մասը հիմնականում արտահանվում է, այս առումով ԱՄՆ դոլար/ԴՆՀ ռուբլի փոխարժեքի տատանումները ուղղակիորեն ազդում են շահութաբերության մակարդակի վրա: Այս ամենի արդյունքում ստացվում է շահութաբերության ցածր մակարդակ: Սակայն պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ ընկերությունը դեռևս 2010թ. է հիմնադրվել և այդ 6 տարիների ընթացքում կատարվել են կապիտալ ներդրումներ, հատկապես 2014-2015թթ., ինչը նշանակում է, որ դեռևս մի քանի տարի կապիտալի իրացման ծավալները ավելացնելու և շահութաբերության բավարար մակարդակ ապահովելու համար:

Ըստ աղյուսակ 2-ի տվյալների ընթացիկ իրացվելիության, գործակիցը 0.68-ից բարելավվել է մինչև 1.4 և սեփական կապիտալ հարաբերակցության, լեներջինը 8.2-ից բարելավվել է մինչև 4.8, ինչպես նաև երկարաժամկետ պարտավորություններ և շրջանառու կապիտալ հարաբերակցության ցուցանիշը -1.82-ից բարելավվել է մինչև 3.7, որը պայմանավորված է ընթացիկ և երկարաժամկետ պարտավորությունների նվազմամբ, ինչը կարելի է գնահատել դրական: Երկարաժամկետ պարտավորություններ և երկարաժամկետ կապիտալ հարաբերակցության ցուցանիշը խոսում է ընկերության երկարաժամկետ պարտավորությունների ծանրաբեռնվածության մասին, քանի որ կապիտալի շուրջ 74% կապիտալի երկարաժամկետ պարտավորության մարման համար: Նշենք, որ երկարաժամկետ պարտավորությունների առկայությունը պայմանավորված է Ընկերությունում կապիտալ ներդրումների, այն է սարքավորումների վերագինման հետ, որը ապահովել է արտադրական ծավալների ավելացում և արտադրատեսականու ավելացում, արդյունքում ավելացնելով իրացման ծավալները:

Համեմատելով վերոհիշյալ ցուցանիշները շահութաբերության ցուցանիշների և ստացված զուտ շահույթի հետ կարելի է փաստել, որ Ընկերությունը ունենալով խոշոր պարտավորություններ կարողանում է ապահովել դրանց մասնակի մարումները, ապահովել շահութաբերություն և շարունակել հետագա գործունեությունը:

Աղյուսակ 2.

«Արարատ սննդի կոմբինատ» ՍՊԸ իրացվելիության գործակիցները 2013-2016թթ.

Գործակցի անվանումը	Գործակցի բանաձևը	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.
Ընթացիկ իրացվելիություն (> 2)	Ընթացիկ ակտիվներ/ Ընթացիկ պարտավորություններ	0.68	0.94	1.16	1.4
Պարտավորություններ (< 50%) և սեփական կապիտալ հարաբերակցությունը	Երկարաժամկետ պարտավորություններ/ Սեփական կապիտալ	265.97	393.92	263.52	293.8
Երկարաժամկետ պարտավորություններ և երկարաժամկետ կապիտալ հարաբերակցությունը (< 33%)	Երկարաժամկետ պարտավորություններ/ (Երկարաժամկետ պարտավորություններ + Սեփական կապիտալ)	72.68	79.7	72.5	74.6
Լևերեջ (> 1.5 < 2)	Ընդամենը ակտիվներ/ Սեփական կապիտալ	8.22	9.62	4.80	4.8
Երկարաժամկետ պարտավորություններ և շրջանառու կապիտալ հարաբերակցությունը	Երկարաժամկետ պարտավորություններ/ (Ընթացիկ ակտիվներ-Ընթացիկ պարտավորություններ)	-1.82	-13.69	7.40	3.7

Աղյուսակ 3.

«Արարատ սննդի կոմբինատ» ՍՊԸ ակտիվայնության գործակիցները 2013-2016թթ.

Գործակցի անվանումը	Գործակցի բանաձևը	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.
Ակտիվների շրջանառելիությունը	Իրացումից հասույթ/ Միջին ընդամենը ակտիվներ	0.30	0.3	0.26	0.30
Միջին ընթացիկ ակտիվների շրջանառելիությունը	Իրացումից հասույթ/ Միջին ընթացիկ ակտիվներ	0.75	0.85	0.53	0.59
Չուտ շրջանառու կապիտալի հարաբերակցություն	(Ընթացիկ ակտիվներ - Ընթացիկ պարտավորություններ)/ Ընդամենը ակտիվներ	-0.17	-0.02	0.07	0.2
Դեբիտորական պարտավորությունների հավաքագրման ժամկետը	Ընդամենը միջին դեբիտորական պարտավորություններ X 365/ Իրացումից հասույթ	120.45	154.08	274.55	268
Հիմնական միջոցների շրջանառելիությունը	Իրացումից հասույթ/ Հիմնական միջոցներ	0.56	0.69	0.60	1.48

Ըստ աղյուսակ 3-ի տվյալների ակտիվների շրջանառելիության գործակիցը 0.3 ցույց է տալիս ակտիվների յուրաքանչյուր դրամի դիմաց ստացված իրացումից հասույթը: Այսպիսով դրամային արտահայտությամբ յուրաքանչյուր ակտիվի 1 դրամից ստացվում է 0.3 դրամ հասույթ: Ընթացիկ ակտիվների շրջանառելիության ցուցանիշը ցույց է տալիս, որ ընթացիկ ակտիվի 1 դրամից ստացվում է 0.6 դրամ հասույթ: Չուտ շրջանառու կապիտալի հարաբերակցության գործակիցը բարելավվել է -0.17-ից 0.2-ի, որը ցույց է տալիս կարճաժամկետ իրացվելիությունը, այն է ակտիվների արդյունավետության օգտագործման աստիճանը և ստացված ցուցանիշից երևում է, որ զուտ շրջանառու կապիտալը արդյունավետ չի օգտագործվել: Դեբիտորական պարտավորությունների հավաքագրման ցուցանիշը ցույց է տալիս պարտավորություններ մարման արդյունավետությունը: Մեր օրինակում 268 ցուցանիշը ցույց է տալիս, որ պարտավորությունների հավաքագրումը կատարվում է միջինը 268 օրում, որը կարելի է գնահատել անբավարար: Հիմնական միջոցների շրջանառելիություն գործակիցը 2013թ.-ից մինչև 2015թ. գրեթե չի փոփոխվել, սակայն 2016թ. այդ ցուցանիշը բարելավվել է կազմելով 1.46, ինչը նշանակում է հիմնական միջոցների շրջանառությունը իրականանում է 1.5 անգամ և 1 դրամ հիմնական միջոցից ստացվում է 1.5 դրամ իրացումից հասույթ: Նշենք, որ Ընկերության հաշվեկշիռի աճի գործակիցը 2014թ. կազմել է 12%, 2015թ. 16.7%, իսկ 2016թ. 9.1%:

Ըստ աղյուսակ 4-ի տվյալների ֆինանսական կախվածության գործակիցը (սահմանված նորմատիվը < = 0.5) ցույց է տալիս ընկերության ակտիվների կախվածությունը պարտավորություններից: Մեր օրինակում 2016թ. 0.79 ցուցանիշը խոսում է ընկերության արտաքին աղբյուրներից ֆինանսական կախվածության մասին: Ֆինանսական ռիսկի գործակիցը 3.8 (սահմանված նորմատիվը < = 1) ցույց է տալիս ընդհանուր պարտավորությունների կախվածությունը սեփական կապիտալից, ինչպես նաև ռիսկայնության մակարդակը: Մեր օրինակում կախվածության 3.8 ցուցանիշը ռիսկային է, քանի որ պարտավորությունները 3 անգամ գերազանցում են սեփական կապիտալը, սակայն պետք է նկատել, որ վերջին 2 տարիներին այդ ցուցանիշը բարելավվել է, քանի որ պարտավորությունների մի մասը մարվել է, ինչը դրական գործընթաց է: Ընթացիկ պարտավորություններ և սեփական կապիտալ հարաբերակցության գործակիցը 1.8 ցույց է տալիս ընթացիկ պարտավորությունների կախվածությունը սեփական կապիտալից: Ցուցանիշը բարելավվել է մոտ երկու անգամ, ինչը նշանակում է, որ ընթացիկ պարտավորությունները կրճատվել են և այս գործընթացը շարունակական է եղել: Նույնը կարելի է ասել ընթացիկ ոչ ընթացիկ հարաբերակցության ցուցանիշին, որը 1.71-ից բարելավվել է 0.58-ի, այսպիսով ընթացիկ պարտավորությունները կազմում են ոչ ընթացիկ պարտավորությունների 58%-ը: Հաջորդող ընթացիկը ընդհանուրի հարաբերակցության ցուցանիշը, որը ցույց է տալիս ընթացիկ պարտավորությունների մասնաբաժինը ընդհանուր

պարտավորություններում 0.63-ից բարելավվել է 0.47-ի, քանի որ ընթացիկ պարտավորությունները կազմում են ընհանուր պարտավորությունների 47%-ը: Սեփական կապիտալի հարաբերակցությունն ցուցանիչը 0.12-ից բարելավվել է 0.21-ի, ինչը նշանակում է, որ սեփական կապիտալը կազմում է ակտիվների նախկին 12%-ի փոխարեն 21%-ը: Կապիտալիզացիայի ցուցանիչը նույնպես բարելավվել է 8.22-ից 2016թ. կազմելով 4.82, հետևապես կապիտալի հաշվին ընդհանուր ակտիվների ֆինանսավորման ծավալը ավելացել է: Միևնույն ժամանակ պետք է նկատել, որ ցուցանիչը դեռ անբավարար է և ակտիվները ֆինանսավորվել են արտաքին աղբյուրներից վարկերի և փոխառությունների տեսքով, որը բարձրացնում է ռիսկայնության աստիճանը: Հիմնական միջոցներ սեփական կապիտալ հարաբերակցությունն ցուցանիչը 2015թ. բարելավվել է կազմելով 1.87, որը ապահովվել է կապիտալի ավելացման շնորհիվ, սակայն 2016թ. այն կրկին ավելացել է՝ կազմելով 2.72, ինչը նշանակում է, որ հիմնական միջոցները ֆինանսավորվել են հիմնականում այլ աղբյուրներից: Հաշվի առնելով 2016թ. երկարաժամկետ պարտավորությունների առկայությունը և դրա ծավալը, այս ցուցանիչը կարելի է գնահատել բացասական, քանի որ հիմնական միջոցները կազմել են սեփական կապիտալի 272%-ը: Նշենք, որ Ընկերության սեփական կապիտալի ցուցանիչը 2014թ. նվազել է 31.7%-ով, 2015թ. աճը կազմել է 40%, իսկ 2016թ.՝ 31.7%: Միաժամանակ Ընկերության երկարաժամկետ պարտավորությունների աճի ցուցանիչը 2014թ. կազմել է 49.7%, 2015թ.՝ 54.8%, սակայն 2016թ. պարտավորությունները նվազել են 10.9%-ով: Ընկերության ընթացիկ պարտավորությունների ցուցանիչը 2014թ. նվազել է 3.8%-ով, 2015թ.՝ 7.1%-ով, իսկ 2016թ. նվազել է 27.2%-ով: Այս ցուցանիչի դիմադրական վկայում է Ընկերության ընթացիկ պարտավորությունների կրճատման մասին, ինչը նշանակում է, որ իրացման ծավալների ավելացման դեպքում կստեղծվեն նախադրյալներ Ընկերության ընթացիկ ապա նաև երկարաժամկետ կրեդիտորական պարտավորությունների կրճատման և շահութաբերության մակարդակի բարձրացման համար:

Աղյուսակ 4.

«Արարատ սննդի կոմբինատ» ՍՊԸ լւերեջային գործակիցները 2013-2016թթ.

Գործակցի անվանումը	Գործակցի բանաձևը	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.
Ֆինանսական կախվածության գործակից (<= 0.5)	Ընդամենը պարտավորություններ/ Ընդամենը ակտիվներ	0.88	0.90	0.79	0.79
Ֆինանսական ռիսկի գործակից (<= 1)	Ընդամենը պարտավորություններ/ Սեփական կապիտալ	7.22	8.62	3.80	3.8
Ընթացիկ պարտավորություններ և Սեփական կապիտալի հարաբերակցություն	Ընթացիկ պարտավորություններ/ Սեփական կապիտալ	4.56	4.68	2.17	1.8
Ընթացիկ ոչ ընթացիկ հարաբերակցություն	Ընթացիկ պարտավորություններ/ Ոչ ընթացիկ պարտավորություններ	1.71	1.19	0.82	0.58
Ընթացիկը ընդհանուրի հարաբերակցություն	Ընթացիկ պարտավորություններ/ Ընդամենը պարտավորություններ	0.63	0.54	0.57	0.47
Սեփական կապիտալի հարաբերակցություն	Սեփական կապիտալ/ Ընդամենը ակտիվներ	0.12	0.10	0.21	0.21
Կապիտալիզացիայի ցուցանիչ	Ընդամենը ակտիվներ /Սեփական կապիտալ	8.22	9.62	4.80	4.82
Հիմնական միջոցներ սեփական կապիտալ հարաբերակցություն	Հիմնական միջոցներ/ Սեփական կապիտալ	4.55	4.74	1.87	2.72

Ուսումնասիրելով «Արարատ սննդի կոմբինատ» ՍՊԸ կողմից ՀՀ պետական բյուջե կատարվող հարկային մուտքերը, կարելի է նկատել, որ տարիների ընթացքում խոշոր գումարներ ուղղվել է պետական բյուջե: Այսպես՝ 2013թ. պետական բյուջեի փոխանցումները կազմել են 384,758.9 հազար ՀՀ դրամ, որից 12%-ը ուղղակի հարկեր (շահութահարկ կամ եկամտահարկ), 81.7%-ը անուղղակի հարկեր (ԱԱՀ, ակցիզային հարկ և այլն), 6.3%-ը այլ հարկեր, տուրքեր, որով 1000 խոշոր հարկ վճարողների ցանկում Ընկերությունը զբաղեցրել է 296-րդ տեղը: Ընկերության կողմից 2014թ. վճարված հարկերը կազմել են 432,089.4 հազար ՀՀ դրամ, որից 6.2%-ը ուղղակի հարկեր (շահութահարկ կամ եկամտահարկ), 78.43%-ը անուղղակի հարկեր (ԱԱՀ, ակցիզային հարկ և այլն), 0.12%-ը հաստատագրված վճարներ, 15.24%-ը այլ հարկեր, տուրքեր, որով 1000 խոշոր հարկ վճարողների ցանկում զբաղեցրել է 285-րդ տեղը: Վճարված հարկերը 2015թ. կազմել են 227,003.4 հազար ՀՀ դրամ, որից 12.4%-ը ուղղակի, 74.2%-ը անուղղակի հարկեր, 3.7%-ը հաստատագրված վճարներ և 9.7%-ը, այլ հարկեր, տուրքեր, որով 1000 խոշոր հարկ վճարողների ցանկում զբաղեցրել է 485-րդ տեղը: Վճարված հարկերը 2016թ. կազմել են 114,516.6 հազար ՀՀ դրամ, որից 26%-ը ուղղակի, 54.9%-ը անուղղակի հարկեր, 6.1%-ը հաստատագրված վճարներ և 13%-ը այլ հարկեր, տուրքեր, որով 1000 խոշոր հարկ վճարողների ցանկում զբաղեցրել է 895-րդ տեղը [11-14]: Այսպիսով «Արարատ սննդի կոմբինատ» ՍՊԸ կողմից հարկային մուտքերը պետական բյուջե վերջին երկու տարիների ընթացքում կրճատվել են՝ պայմանավորված նրանով, որ 2013թ. և 2014թ. Ընկերության կողմից վճարվել է նախորդող տարիներին արտադրամասի վերազինման նպատակով ներմուծված սարքավորումների դիմաց հետաձգված ԱԱՀ վճարները: Սակայն ակնհայտ է Ընկերության նշանակությունը տնտեսության մեջ, քանի որ տնտեսական գործունեության ընթացքում ապահովվում են աշխատատեղեր, մթերվել է գյուղատնտեսական մթերքներ, որը ուղղվել է վերամշակման, նպաստելով երկրում ագրոարդյունաբերական համալիրի, ինչպես նաև սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը: Ամփոփելով իրականացված վերլուծության արդյունքները կարելի է եզրակացնել, որ «Արարատ սննդի կոմբինատ» ՍՊԸ գործունեության ընթացքում ընթացիկ և երկարաժամկետ պարտավորությունների ծանրաբեռնվածության առկայությամբ հանդերձ ապահովվում է շահութաբերության բավարար մակարդակ և նկատելի է զարգացման հեռանկարը: Միաժամանակ ընկերությունում իրացված արտադրանքի դիմաց գոյանում են դեբիտորական պարտավորություններ, որոնց հավաքագրման ժամկետները երկար են, այս ուղղությամբ Ընկերությունը իրացման կետերի հետ պետք է վարի ավելի ճկուն քաղաքականություն գումարների հետվերադարձման համար: Այս առումով Ընկերությունը պետք է հնարավորինս գերծ մնա կրեդիտորական պարտքերի և կարճաժամկետ վարկերի ու փոխառությունների մարման հետաձգման գործընթացից և գումարային կուտակումներից: Միաժամանակ պետք է դեբիտորական պարտավորությունների մարման գործընթացի կազմակերպում, հնարավորինս շուտ վերածելով դրանք դրամական միջոցների, ապահովելով արագ իրացվելի ակտիվներ: Այսպիսով Ընկերությունում կապիտալի համապատասխան ծավալի առկայություն և ֆինանսական կայունություն ապահովելու

Նպատակով անհրաժեշտ է շահույթի ավելացման շնորհիվ կապիտալի ծավալի ավելացում, քանի որ մեր օրինակում ակտիվների առաջացման հիմնական աղբյուրը փոխառություններն են և վարկերը: Այս առումով ԸՆկերությունում պետք է պարբերաբար վերլուծություն իրականացվի պարզելու պարտավորությունների և սեփական կապիտալի հարաբերակցության մակարդակը և շահութաբերության մակարդակի վրա ազդող գործոնները: Կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ «Արարատ սննդի կոմբինատ» ՍՊԸ-ում անհրաժեշտ է ներդնել կառավարչական հաշվառման համակարգ, համաձայն որի կմշակվի կառավարչական հաշվառման հայեցակարգը: ԸՆկերությունում անհրաժեշտ է մշակել կառավարչական հաշվետվությունների ձևեր, իրականացնել բիզնես գործընթացների փաստաթղթավորում և միասնական տեղեկատվական համակարգի ներդրում: Կառավարչական հաշվառման միջոցով հնարավոր կլինի, դասակարգել ծախսերը հաստատուն և փոփոխականի իրականացնելով փաստացի ինքնարժեքի հաշվարկ և դրանց կառավարմամբ ապահովել ֆինանսական արդյունքի, մասնավորապես շահույթի բավարար մակարդակ: Միաժամանակ հնարավոր կլինի վերլուծել ոչ նյութական ակտիվների նշանակությունը, կազմել կառուցվածքը և դրանց օգտագործման արդյունավետությունը և շահութաբերությունը, հաշվառել նյութերով ապահովվածությունը, արտադրանքի նյութատարությունը, դրա փոփոխության ազդեցությունը ինքնարժեքի վրա:

Կազմակերպության պարտավորությունների արդյունավետ կառավարման, հասույթի և շահութաբերության մակարդակի բարձրացման նպատակով առաջարկվում է ընդլայնել արտադրությունը և կազմակերպել պտուղ-բանջարեղենի չոր արտադրություն: Դրա համար կպահանջվի իրականացնել 30,000-40,000 ԱՄՆ դոլարի ներդրում (ներդրումը կարող է լինել նաև դրամաշնորհի տեսքով պետական աջակցության ծրագրերի միջոցով) և ձեռք բերել հայրենական արտադրության երկու հատ 750 կգ տարողությամբ չոր չորանոցներ: Նշենք, որ 1 կգ պատրաստի արտադրանք ստանալու համար պահանջվում է 6-7 կգ հումք, այսպիսով արդյունավետ իրացում կազմակերպելու միջոցով կարելի է ապահովել մոտ 30% և ավելի շահութաբերություն: Հետագայում չորարտադրության զարգացման նպատակով առաջարկվում ենք արտադրել նաև շոկոլադապատ չորեր, որի համար կպահանջվի շոկոլադապատման սարքավորում, որի արժեքը Չինաստանում կազմում է 3,000-8,000 ԱՄՆ դոլար: Ստացված շոկոլադապատ չորերը ապրանքային վերջնական տեսք տալու նպատակով կարելի է փաթեթավորել, ապա իրացնել ՀՀ-ում և արտերկրում: Կարևոր է այն, որ ԸՆկերությունը ունի բոլոր նախադրյալները չորերի արտադրությունում հաջողության հասնելու համար այն է՝ արտադրական և մարդկային ռեսուրսներ, հումքի մթերման մասով համագործակցության և առաքման կետերի առկայություն, արտերկրում դիստրիբյուտորական ցանցերի հետ համագործակցություն և այլն: Իրացման ծավալների ընդլայնման շնորհիվ հնարավոր կլինի ստացված շահույթը ուղղել հետագա զարգացմանը, կամ կրեդիտորական պարտավորությունների մասնակի կատարմանը, կամ ուղղել շրջանառու միջոցների ձեռքբերմանը, քանի որ արդեն նշել էինք ԸՆկերությունում դեֆիտորական պարտավորությունների հավաքագրման ժամկետները երկար են լինում, ուստի կանխիկ միջոցների անհրաժեշտություն է լինում: ԸՆկերության ֆինանսական հիմնախնդիրների լուծման համար կարևոր նախադրյալ է կայուն և զարգացող իրացման ծավալների ապահովումը, որի համար առաջարկվում է մարքեթինգային քաղաքականությունում կիրառել առցանց մարքեթինգի որոշ գործիքներ, որոնք կնպաստեն հաճախորդների բանակի ավելացմանը և ապրանքանիշի նկատմամբ կապվածության ապահովմանը: Դրա համար անհրաժեշտ է առցանց տիրույթում ՀՀ և ՌԴ սպառողների համար իրականացնել գովազդային արշավներ վճարովի հիմունքներով, թիրախավորելով վաճառակետերի շրջակայքում գտնվող տարածաշրջանի բնակչությանը: Միաժամանակ անհրաժեշտ է արտերկրի իրացման կետերում կազմակերպել տաղավարներով ապրանքատեսակաձև ներկայացման միջոցառումներ նոր հաճախորդների ներգրավման նպատակով, կարելի է կիրառել նաև ապրանքատեսակաձև թռուցիկների բաժանում հաճախորդներին: Ներկայացված առաջարկները կարող են լայնորեն կիրառվել ՀՀ պահածո արտադրող մի շարք ձեռնարկություններում և միտված են նպաստելու կազմակերպություններում ֆինանսական վիճակի բարելավմանը և շահութաբերության ավելացմանը:

### Օգտագործված գրականություն

1. Ա. Բայադյան, Ֆինանսական միջոցների կազմավորման, օգտագործման և բարելավման ուղիները ՀՀ ագրարային ոլորտում,- Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016.-184 էջ:
2. Ա. Բայադյան, Ֆինանսական վերլուծություն, Ուսումնական ձեռնարկ: Եր: Լիմուշ,- 2008, 300 էջ:
3. Ա. Բայադյան, Ձեռնարկությունների ֆինանսական դրոշմի գնահատումը: Եր. Ատոլիկ, - 2006 298 էջ:
4. Լ. Բաղդասյան, Կ. Աբգարյան, Ա. Սալնազարյան և ուրիշներ/ Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ, Դասագիրք,-Եր., Չանգակ-97, 2007, 664 էջ:
5. Կ.Ա. Առաքելյան, Կազմակերպության տնտեսական գործունեության վերլուծություն: ՈՒսումնական ձեռնարկ.- ԵՐ.: Չանգակ-97, 2006, 256 էջ ,
6. Ս. Ծ. Ղազարյան, Ֆինանսական արդյունքների կառավարչական հաշվառումը (դասախոսություն) , -Եր: Տնտեսագետ, 2006.-54 էջ:
7. Վ. Վարդանյան, Ֆինանսների ընդհանուր տեսություն, Ֆինանսներ, Ձեռնարկությունների ֆինանսներ, Ձեռնարկությունների տնտեսագիտություն,- Եր.: Եգեա,-2005,-464 էջ:
8. Eugene Brigham F., Joel Houston F., Fundamentals of Financial Management 10<sup>th</sup> edition, Publisher Thomson Learning 2003, 842p.
9. <http://news.am/arm/news/97824.html>, [վերջին մուտք 15.11.2017թ.]
10. Արարատ սննդի կոմբինատ ՍՊԸ 2012-2016թթ. տարեկան ֆինանսական Ձև 1 և Ձև 2 հաշվետվություններ:
11. [http://www.taxinfo.am/upload/492%20KB\\_1485935723644.pdf](http://www.taxinfo.am/upload/492%20KB_1485935723644.pdf) [վերջին մուտք 15.10.2017թ.]
12. [http://www.taxinfo.am/upload/502%20KB\\_1453818619122.pdf](http://www.taxinfo.am/upload/502%20KB_1453818619122.pdf) [վերջին մուտք 15.10.2017թ.]
13. [http://www.taxinfo.am/upload/496%20KB\\_1422970469963.pdf](http://www.taxinfo.am/upload/496%20KB_1422970469963.pdf) [վերջին մուտք 15.10.2017թ.]
14. [http://www.taxinfo.am/upload/495%20KB\\_1391097425870.pdf](http://www.taxinfo.am/upload/495%20KB_1391097425870.pdf) [վերջին մուտք 15.10.2017թ.]

Ներկայացվել է 14.11.2017թ.  
Ընդունվել է տպագրության 26.12.2017թ.